նագրութեանցդ աղերսն այնպիսի է որ մեք հարկաւորեալ եմք նկատել զայնոսիկ անբաժան յիրերաց, իբր միոյ անձին սեփականութիւնս. անմարթ է ուրեմն ըսել թէ Կորիւն բանաքաղած է յօտարաց, երբ օտարք — միւս մատենագիրք Ոսկեղարու — չգիտեն բնաւ իսկ ամենեւին և ոչ զմի ի բանից Երրորդ տեսակին, եւ յերկրորդ տեսակին՝ թէև զբարսն գիտեն, ոչ նովին խառնուածովք և կազմութեամբք կը շարադրեն, ոչ նովին դասաւորութեամբք, այլ Կորիւն ինքնին է որ կը խօսի ծայրէ ի ծայր ի Վարս Մաշթոցի իւր յատուկ բառերով և ձեւերով՝ յորոց զոմանս արդէն ի կիր արկած էր յնէթաղ և ի Մակաբայեցիս» (Նորայր, Կորիւն Վրդ. էջ ժդ)։

Այս բոլորը վաղանցուկ եղան և մնացին լոկ իբրև անհատական ջանքեր ու փորձեր։

Դրաբարեաններն վերջին ատրճանը կազմում էին այն շատ մեղմացած տիպերը, որոնք ուրիշ բան չէին ուզում, եթէ ոչ աշխարհաբար գրութեանց մէջ երբեմն երբեմն խառնել գրաբար ոճեր ու դարձուածքներ։ Իբրև այս վերջիններիս ներկայացուցիչներ մնում էին Վենետկի և Վիեննայի Մխիթարեանները, որոնք այսօր նոյնպէս հրաժարած են իրենց փափագից։

Աշխարհաբարը յաղթանակեց ժԹ դարի վերջում և այսօր նրա մի ճիւղը՝ արևելահայ գրական լեզուն ոչ միայն բարձրացել է Հայաստանի Հանրապետութեան ամբիոնը, այլ և Խորհրդային Հայաստանի Կառավարութեան Պետական լեզուն է, պաշտօնապէս ճանաչուած ամբողջ Միութեան մէջ։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

# ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻԻ ՔԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար աթոռոյ առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Պատուելի միաբանութեան հայոց հոգեւորականաց և մարմնաւորականաց Հայոց Թաւրէժ քաղաքացւոց նուիրեմ զողջոյն Քրիստոսական և աղօթս առնեմ զի հզօրասցի ամենատողորմած հովանաւորութիւն Աստուծոյ ի վերայ մեծաց և փոքունց ձեր ամենեցունց արանց և կանանց այժմ և յաւիտեան որոց և ծանուցանեմ զի յայամ երեկոյի ընկալայ զբազմատորագիր զրութիւն ձեր ի Նոյեմբերի 19, զանազան ջատագովութեամբ յաղագս բազմաջան մեծ աշխատութեամբ սրբազան Սահակ եպիսկոպոս փիճակաւորի Աստուածախնամ այդմ վիճակի նախկին Լուսաւորչի Հայոց դամբարանական վանից սրբոյ առաքելոյն Թադդէոսի զորս վաղագոյն եա որպէս և դուք վերայիշատակէք յայամ ձերում գրի գրեալ ունէիք մեզ բաւական հանգամանօք և դուք և ինքն յիշեալ եպիսկոպոսն ըստ որոյ տարակուսական մեզ գտանի թէ առ ինչ նպատակ իցեն վերակրկնութիւնք միենոյն իւրակութեանց և առ այնս շատագովութեանց նորուն սրբազնութեան։

Եկեղեցի հայոց բարձրագոյն միշտ ձայնէ վասն Աստուծոյ ամենազօր ստեղծողին մերոյ՝ թէ գործք քո օրհնեն զքեզ և առաւել բարձրացուցանեն ըստ որոյ և զամենայն զմարդիկ օրհնեն գործք իւրեանց և բարձրացուցանեն զանուն գործողաց։ Եւ գրեալ իսկ է ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի, ըստ որոյ յոյժ կանուխ է այսօրինակ յաճախելն շատ գովութեանց ստորագրութեամբ բազմութեանց այն զի բանաւոր կամ գրաւոր վկայութիւն միոյ անձին վասն որպիսի և իցէ գործոց մեծաց կամ փոքունց միշտ հաստատուն է յորժամ գործն վկայեցեալ իցէ ականերև յանդիման աչաց տեսութեան բազմաց կամ սակաւուց. այժմ գեռ գործոց յայտնութիւնք վասն սկզբնաւորութեանց ուսումնարանի է բաց գրեալ է թէ

digitised by A.R.A.R.@

վախճան պատիւ զգործն և ձեր գովութիւնք և շնորհակալութիւնք վասն սկզբնաւորութեանց ուսումնարանի գրեցեալք են մեզ և յինքենէ սրբազան Սահակ եպիսկոպոսէ քանիցս անգամ և մեք եւ ի մանկութենէ հետէ ծանօթ եմք միմեանց և ոչ անծանօթ։ Այլ զի ի սմին ժամանակի հասարակեալ զտանի զի վասն ամենայն գործակատարաց մերոց բազմութիւնք ժողովրդեան առաքին առ մեզ զզանազան գովաբանութեանց զգրութիւնս որպէս չէ եղեալ սովորութիւն յամենայն ժամանակս Նախանցեալ կաթողիկոսաց. ուստի յաճախեալն այսպիսի բազմատարագիր ջատագովութեանց առաւել տարակուսեցուցանէ զմեզ քան ապահովեցուցանէ. առ որ յայտնեմ ամենայն ժողովրդեան զի յամենայնուրեք ի մէջի քաղաքակիրթ ազգաց արհամարհեալ է բազմատարագիր պատմաբանութիւն վասն որոց և իցէ գործոց մեծամեծաց կամ փոքրագունից ուստի մատուցանելով ձեզ զիմ շնորհակալութիւն վասն շնորհակալութեանց ձերոց զսրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի ձեր և առաւել շնորհակալ եմ վասն ձեր ջատագովութեանց Նորուն բարեջանութեանց յաղագս օգտի հօտին յանձնեցելոյ ինքեան և մեք պարտաւոր զմեզ համարիմք մաղթել յամենազօրէն Աստուծոյ յարատեւել զայնպիսի հովուական բարեջանութեան Նորա զի ըստ ձեր վկայելոյ զանձն իւր ունիցի հանապազ դնել ի վերայ հօտին հաւատացելոյ իւրում հովուութեանց որով փառք Նորա որպէս ի բազմութեանց հօտին գնեցելոյ արեամբ Քրիստոսի այնպէս և յինքենէ ի Քրիստոսէ յիսուսէ լինելոց է փառաւորեալ որպէս մարմնով այնպէս և հոգւով։ Ողջ լերուք և մեք եմք և եղիցուք միշտ աղաչաւոր առ Աստուած վասն պահպանելոյ զձեզ և զամենայն ազգն Հայոց ի հովանաւորութեան ամենաբաւական խնամակալութեանց իւրոց։

Յամի ազգական 1301, և փրկչական 1852,
Համ. 391 Դեկտեմբերի 2 ի սուրբ Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

---

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անճառաանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգային նախամեծար աթոռոյ արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ Եպիսկոպոս վիճակաւորի Թէֆլիզոյ ընկալեալ զգրութիւն յամսեանն Մարտի և այսօր ի 16 Ապրիլի յաւուր Հինգշաբաթու յետ կէս աւուրն բերեալ հասոյց մեզ այլազգի զարդատար զմի բեռն յղեալ նուիրեղենօն ի ձեր Սրբազնութենէ և զկնի երեկոյեան ժամուն եկեալ ստիպեաց թէ ունի ինքն վերադառնալ ի սմին գիշերի. ուստի առանց բանալոյ զբեռն և հասու լինելոյ ամբողջութեանցն տուաք նմա զայս գիր վասն հասուցանելոյն մեզ զբեռն յանձնեցեալ ինքեան. իսկ լիալիր պատասխանի վասն ամենայն գրեցելոցն ձերոց գրեսցուք պօշտի յետ սուրբ Զատկին և մնամք ձեզ ամենիւ բարեացակամ։

Յամի ազգական 1302, և փրկչական 1853,
Համ. 172 Ապրիլի 16 ի Թիֆլիզ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

---

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անճառաանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգային նախամեծար աթոռոյ արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի Թաւրիզոյ քաղաքի և Ատրպատական աշխարհի հայոց ծանուցանեմք, զի նորին գերազանցութիւնն Նիկոլայն Անդրիանովիչ Անիչկով Տր. կոնսուլն Թաւրիզոյ գրութեամբ իւրով առ մեզ ի 23 Մարտի համարաւ 232 յիշեցուցանելով մեզ յաղագս ինչ ինչ արժանաւորութեանց Տ. Գաբրիէլ աւագ քահանայի Թաւրիզոյ Հայոց ընդ որոց և յաղագս հարազատութեանց նորա առ ամենողորմած կայսերական մե-

digitised by A.R.A.R.@

ծութիւն և մոխրմութեանցն առ խոր գերազանցութիւն արժան էր ցուցանել զնա պարգևաց լանջական խաչի առ ի մէնջ մեք ևս զոլով ծանօթ ի վաղուց յաղագս նորուն գերազանցութեան բարեկամութեանցն ընդ մեզ և շնորհացն առ մերազնեայս, թէպէտ և անծանօթ էր մեզ յիշեալ Գաբրիէլ աւագ քահանայն, և չեն յայտնեցեալ մեզ անդր քան զքահանայագործութիւն նորա, այլ անձնական բարեջանութիւնք նորա վասն եկեղեցւոյ և վասն ժողովրդեան, բայց վկայութիւն նորուն գերազանցութեան վասն հարազատութեանց նորա անսան և Աթոռոյ մեծ կայսերութեան ամենայն ռուսայ հովանորոչի եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ժողովրդեան ամենայն հաւատացելոց ի սուրբ Աստուածութիւն նորա նաև հաճոյական նորուն գերազանցութեան քահանայավայելուչ՝ բարեպաշտօրէն կենցաղավարութեանցն առաքեցաք ընդ այսմ լանջական խաչ հանդերձ մերով կոնդակաւ յանուն յիշեալ քահանային եղեալ ի ծրարի գրութեան մերում առ Նորին գերազանցութիւն, և խնդրեցաք զի Նորին գերազանցութիւն՝ ընդ ընկալնուլն զկոնդակ մեր և զխաչն լանջական հրաւիրեսցէ առ ինքն զձեր Սրբազնութիւն և զԳաբրիէլ աւագ քահանայն և ձերով ձեռամբ արկցէ զխաչն ի պարանոց քահանային և տացէ նմա զկոնդակն վասն պարգևաց այնմ խաչի, զոր և դուք ունիցիք հրատարակել որպէս արժանաւորել լինիցի. Ողջ լեր։

Համ. 207 Յամի ազգական 1302 և փրկչական
1853 Մայիսի 9, ի Թիֆլիզ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

---

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար աթոռոյ առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի առաջին Լուսաւորչի Հայոց Սրբոյն Թադդէոսի Առաքելոյն Վանաց և Վիճակի հայոց Ատրպատական աշխարհի ողջունիւ Քրիստոսական ծանուցանեմ զի ընկալեալ զգրութիւն ձեր ի 13 Օգոստոսի համարաւ 88. վասն յառաջադիմութեանց ձերով առաջնորդական հոգունակութեամբ սկզբնաւորեալ շինութեանց և կարգաւորութեանց ուսումնարանի Հայոց ի Դաւրէժ քաղաքի, ընդ որում ընկալեալ և զգրութիւնսն հարազատից սրբոյ Մայր եկեղեցւոյ իւրեանց կաթուղիկէ Էջմիածնի և մեր մեծարոյ Աղայ Առաքելի Մելիք Մինասեան և եղբօր նորա բարձրագահ Ստեփան Խանի բազում ուրախութեամբ սրտի իւրեանց վասն սկզբնաւորութեանց այնմ ուսումնարանի, և առաւել ջատագովութեամբ վասն ձեր առաջնորդական յատկացեալ պարտաւորութեամբ հոգունակութեանց վասն ուսումնարանի մանկանց ժողովրդեան հօտին հաւատացելոյ ձերում առաջնորդութեանց բազում մխիթարութեամբ հոգւոյ մերոյ մատուցանեմք և մեք ձերում սրբազնութեան զմեծ գոհունակութիւն մեր յաղագս կարգելոյ Աստուածահրաման առաջնորդական բարեջանութեամբ ջատագով ձեզ զիշխանսն և զհասարակութիւն ժողովրդեան որդւոց սրբոյ Առաքելական Եկեղեցւոյ Հայոց։

Փառք տեառն Աստուծոյ մերոյ որ արժանի արար զմեզ լսել զայսպիսի շնորհապարտութիւն ժողովրդեան յաղագս իւրեանց վիճակաւորի քան զոր առաւել մխիթարութիւն ոչ կարէ լինել մերում սրտի զուցէ և ամենից եկեղեցական ծայրագոյն տեսչութեանց։ Արժանաւորեսցէ Տ. զայսպիսի ջատագովութիւն ձերում բարեջան առաջնորդութեանց յարաձգել ընդ ձերում պատուական կենաց ի փառս Տեառն Աստուծոյ և ի մխիթարութիւն սրտից բազմավիշտ ազգի հայրենեաց։

Մեք յամսեանն Դեկտեմբերի ամին անցելոյ վասն համազգական և Աթոռային կարևորագոյն գործոց եկաք ի Թիֆլիզ դիտաւորութեամբ վերադարձի յամսեանն Ապրիլի, այլ տակաւին մնամք աստէն յաղագս տալոյ զվախճան անդանց առնելի հոգունակելեացն յաղագս ընթացից Եկեղեցական և հոգևորական պարտաւորութեանց ենթադրեցելոց կառաւարութեանց ընդհանրական կաթուղիկոսն և պատրիարգական ծայրագոյն տեսչութեանց և արժանաւորեսցէ ա-

digitised by A.R.A.R.@

*մենաբաւականն ոչ ևս առաւել անսպան ժամանել ի ծոց սրբոյ Մօր մեր լուսոյ։*

*Յարգելով զվաղնջական չարունակութիւն ջատագովութեանց նորուն արժանաւանձնութեան աղայ Առաքել Մելիք Մինասեան հարազատի մեր և սրբոյ եկեղեցւոյ հայրենեաց ընդ նմին և ձերում սրբազնութեան պարգևեցաք Տ. Յովսէփ քահանային Տ. Յովսէփեանց արծաթեայ ոսկեզօծ լանջական խաչ զոր հանդերձ մերով կոնդակաւ առաքեցաք ընդ այսմ յիշեալ հարազատի մերում յորմէ ունի ընկալնուլ կրօղն զայն առ ի նմանէ ջատագովեալ քահանայն։*

*Յաղագս Թագորդացն գինի վաճառի սրբազան Նիկողայոս եպիսկոպոսին եղելոյ ցարդ ընդ կնքով գրեալ եմ նորուն արժանանանձնութեան աղայ Առաքելին և ձեզ ևս գրեմ, զի ունիմք գրել Ատեննակալացն ի Սինոդի էջմիածնի տնօրինել որպէս արժան զատել ունիցին և հրամայել զպատկանեալն սրբոյ վանիցն Թադդէոսի Առաքելոյ յանձնել ձեզ և որոյ պատկանի և զպատկանեալն Աթոռոյ էջմիածնի առաքել ի Սինոդն նորա։*

*Յաղագս ուսումնարանին ըստ ձեր յառաջագրութեանց գրեսցուք ոչ ևս անտագան զկոնդակ յանուն միաբանութեան Հայոց Թաւրիզոյ եկեղեցականաց և ժողովրդականաց. Ողջ լերուք։*

*Յամի ազգական* 1302, *և փրկչական* 1853,
*Համ.* 418 *Հոկտեմբերի* 21, *ի Թիֆլիզ։*

*ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*
*ՆԵՐՍԷՍ*

Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

Այս տարի եւս Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը տուաւ իր հոգեւոր հունձքը՝ յանձին չորս նոր Սարկաւագներու։

Ժառանգաւորաց Վարժարանի Դ. դասարանի վեց աշակերտները աւարտած ըլլալով իրենց քառամեայ ուսումնական շրջանը՝ հրաւիրուեցան, Տեսչութեան կողմէ, տալու իրենց վերջնական որոշումը։

Անոնցմէ չորսը Տնօրէն Ժողովոյ առջեւ յօժարութիւն յայտնած եւ ուխտագիր ստորագրած ըլլալով ընդունելու կուսակրօն եկեղեցականութեան լուծը, կիսասարկաւագութեան աստիճանի տուչութիւնը կատարուեցաւ՝ Վերափոխման բարեկենդանի Կիրակին, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, «լցաք»էն անմիջապէս առաջ. իսկ Ս. Պատարագի մատուցման միջոցին, սոյն չորս ձեռնադրուեցան Աւագ Սրկ.։ Ս. Պատրիարք Հայրը կատարեց ձեռնադրութիւնը։ Խարտաւիլակն էր Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեան։ Արտառոչ էր պահը երբ չորս նորընծայեալները ծնկաչոք կը յառաջանային դէպի Ս. Սեղան։ Յուզուած էին նոյնպէս իրենք, երբ ծնրադիր եւ դողահար վերելակելով Ս. Բեմին մարմարեայ սանդուխքէն, «երկիւղիւ ու հաւատով» յառաջ կը մատչէին դէպի Սեղանը իրենց Ս. Զոհին. զգացուած էին նաեւ ամէնքը, Ս. Պատրիարքը եւ Միաբանութիւնը, իրենց մտատիպարին շարունակութիւնը դիտելով անոնց հոգիներու այս հոյլին մէջ, եւ ժողովուրդն ինքնին՝ որուն համակիր նայուածքին առջեւ ամէն օր հասակ նետեր եւ շնորհօք բարգաւաճեր էին անոնք ամէն տարի։ Յուզումին ալիքը լայնցաւ հոգիներուն մէջ, երբ ընծայեալները երեսնին ժողովուրդին դարձուցած, աչք յերկինս, աշխարհէ հրաժարման իրենց ուխտը կը հրատարակէին ձեռամբարձ. մինչ դպիրք եւ միաբանք երգս կը վերերգէին պատկառանքով եւ արտայոյզ. «Աստուածային եւ երկնաւոր շնորհ... կոչէ...»ն։ — Յաջորդեց «Ես դնեմ ձեռս»ը՝ արտաբուեց, իւրաքանչիւրին համար ուրոյն ուրոյն. ու երբ կը լսուէր «Դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լինիցի սա անարատ պաշտել զաստիճան սարկաւագութեան...»ը, բո-

digitised by A.R.A.R.@